**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**24 հունվարի 2023թ.** **N 2-Ն**
**ք. Երևան**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 24-Ի ԹԻՎ 17-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2022 թվականի մարտի 24-ի «Տեղամասային կենտրոնի և քվեարկության սենյակի մատչելիության, լուսավորության և հանձնաժողովի բնականոն աշխատանքի ապահովման լրացուցիչ պահանջներ սահմանելու և տեղամասային կենտրոնների ցանկը ներկայացնելու օրինակելի ձևը սահմանելու մասին» թիվ 17-Ն որոշման թիվ 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**
**ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ՝** **Ա. ՍՄԲԱՏՅԱՆ**

*Հավելված*
*Հայաստանի Հանրապետության*
*կենտրոնական ընտրական հանձնաժողովի*
*2023թ. հունվարի 24-ի N 2-Ն որոշման*

*«Հավելված 2*
*Հայաստանի Հանրապետության*
*կենտրոնական ընտրական հանձնաժողովի*
*2022թ. մարտի 24-ի N 17-Ն որոշման*

**[ նշվում է տեղամասային կենտրոնները սահմանելու մասին իրավական ակտի համարը և ընդունման տարեթիվը ]**
**ՑԱՆԿ**

**[ նշվում է ընտրության անվանումը ] ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**
**_______________ ՄԱՐԶ, ___________________ ՀԱՄԱՅՆՔԻ**

**ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ**

| **Մարզ** | **Համայնք** | **Բնակավայր** | **Տեղամասային կենտրոնների գտնվելու /վայրի/ հասցե** | **Տեղամասային կենտրոնի և քվեարկության սենյակի չափորոշիչներ** | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | **Տեղամասային կենտրոնին հարող տարածքը (կայանատեղ)** | Մոտակա տրանսպորտային կանգառի առկայություն | այո ☐ ոչ ☐ |
| | | | | | Կայանատեղի ***մեծ է 240 սմ-ից*** | այո ☐ ոչ ☐ |
| | | | | **Տեղամասային կենտրոնի շենք** | Տեղամասային կենտրոնի մուտքի դռան լայնությունը ***մեծ է 90 սմ-ից*** | այո ☐ ոչ ☐ |
| | | | | | Մուտքի աստիճաններ | այո ☐ ոչ ☐ |
| | | | | | Թեքահարթակի առկայություն ***1:10 կամ 1:12 թեքությամբ*** | այո ☐ ոչ ☐ |
| | | | | | Այլընտրանքային մուտքի առկայություն | այո ☐ ոչ ☐ |
| | | | | **Քվեարկության սենյակ** | Քվեարկության սենյակի մուտք ***մեծ է 90 սմ- ից*** | այո ☐ ոչ ☐ |
| | | | | | Քվեարկության սենյակի գտնվելու հարկը | |
| | | | | | Վերելակի առկայություն | այո ☐ ոչ ☐ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Քվեարկության սենյակի մակերեսը ***մեծ է 30 ք.մ -ից*** | այո ☐ ոչ ☐ |
| | | | | | Բավարար բնական լուսավորություն | այո ☐ ոչ ☐ |
| | | | | | Բավարար արհեստական լուսավորություն | այո ☐ ոչ ☐ |
| | | | | | Առանց պատուհանի պատի առկայություն | այո ☐ ոչ ☐ |
| | | | | | Հոսանքի աղբյուրի առկայություն | այո ☐ ոչ ☐ |
| | | | | | Ջեռուցման առկայություն կամ հնարավորություն | այո ☐ ոչ ☐ |
| | | | | | Օդափոխության հնարավորություն | այո ☐ ոչ ☐ |
| | | | | | Գործող մատչելի սանհանգույց | այո ☐ ոչ ☐ |
| | | | | | Տեղամասային կենտրոնում հերթապահություն իրականացնող ոստիկանների սենյակ | այո ☐ ոչ ☐ |
| | | | | **Հարմարություններ բրայլյան գրատառով** | մուտք | այո ☐ ոչ ☐ |
| | | | | | քվեարկության սենյակ | այո ☐ ոչ ☐ |
| | | | | | սանհանգույց | այո ☐ ոչ ☐ |
| | | | | **Հաշմանդամության միջազգային խորհրդանիշ** | | այո ☐ ոչ ☐ |

**Տեղամասային կենտրոնի կոորդինատներն են քարտեզի վրա**[1] **X, Y:**

**Տեղամասային կենտրոնի լուսանկարներ**[2] այո ☐ ոչ ☐»:

---

[1] Օրինակ՝ Վարդգես Պետրոսյանի անվան հիմնական դպրոց, ք. Երևան, 23 շենք, Նաիրի Զարյան փողոց հասցեի դեպքում՝ 40.204785497206, 44.51563635585

[2] Հնարավորության դեպքում համայնքի ղեկավարը տրամադրում է տեղամասային կենտրոնի լուսանկարներ՝ *.png, *.jpg ֆորմատներով: Լուսանկարները պետք է արվեն Landscape ֆորմատով, առավելագույն չափը 500ԿԲ:
Տրամադրվում է մեկական լուսանկար՝
- կայանատեղիի,
- տեղամասային կենտրոնի (շենքի) մուտքի,
- քվեարկության սենյակի մուտքի,
- քվեարկության սենյակի:
Լուսանկարների անվանումը պետք է պարունակի համայնքի (բնակավայրի) անունը և լինի լատինատառ:
Յուրաքանչյուր տեղամասի լուսանկարները կցվում են (attach) մեկ էլեկտրոնային նամակի, որպես թեմա նշվում է ընտրությունն անցկացնող ընտրական հանձնաժողովը և համայնքը (Երևան քաղաքի դեպքում՝ վարչական շրջանը), տեքստային մասում՝ տեղամասային կենտրոնի գտնվելու հասցեն՝ բնակավայր, փողոց, շենք և ուղարկվում է info@elections.am էլեկտրոնային փոստին: